ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՓԱՐԻԶ ԵՎ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ ՔԱՂԱՔՆԵՐ

11.03.2014 09:26

‘Փաստաբանների Միջազգային Միություն’ հայաստանյան ներկայացուցչությունը, ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ Փաստաբանական դպրոց հիմնադրամի հետ համատեղ ս/թ մայիսի 26-ից մինչև հունիսի 01-ը (7 օր/6 գիշեր) կազմակերպում է այցելություն Փարիզ և Ստրասբուրգ քաղաքներ ծանոթանալու Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի (ք. Ստրասբուրգ), Եվրոպական Արբիտրաժային Պալատի (ք.Փարիզ) և Փարիզի փաստաբանական գրասենյակի առանձնահատուկ աշխատանքներին:

Դասընթացի ավարտին տրվելու է հատուկ Եվրոպական Հավաստագիր:

Գիտաուսումնական այցին մասնակից փաստաբաններին ՀՀ փաստաբանական պալատը հաշվարկելու է տարեկան 20 ժամյա պարտադիր վերապատրաստման դասընթացները:

Այցի հիմնական նպատակն է' ծանոթություն երկու Եվրոպական միջազգային ինստիտուտների, Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի (ք.Ստրասբուրգ) և Եվրոպական Արբիտրաժային պալատի (ք. Փարիզ), ինչպես նաև Եվրախորհրդի, Ֆրանսիայի Ազգային ժողովի, Փարիզի փաստաբանական և նոտարական գրասենյակների առանձնահատուկ աշխատանքներին: Մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում տեղում ծանոթանալ դատարանի աշխատանքների առանձնահատկություններին, այցելել Մարդու Իրավունքների Եվրոպական Ինստիտուտ, ինտերակտիվ սեմինարի ընթացքում շփվել այդ ինստիտուտների առաջատար մասնագետների հետ: Մասնակիցները կծանոթանան նաև Փարիզյան փաստաբանական գրասենյակներից մեկի առօրյա աշխատանքին, ինչպես նաև կայցելեն Ֆրանսիայի Ազգային Ժողով և Արդարադատության Պալատ: Եվրախորհուրդ և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան այցելության ժամանակ մասնակիցներին հնարավորություն կընձեռվի հանդիպել առաջատար իրավաբանների և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանում Հայաստանը ներկայացնող դատավոր

Նշված ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև ս.թ. մարտի 23-ը գրանցվել mcca@inbox.ru հասցեին կամ զանգահարել (010) 32-26-05 հեռախոսահամարին “Փաստաբանների Միջազգային Միության” հայաստանյան ներկայացուցչություն,

հայտնելով Ձեր անուն, ազգանունը և հեռախոսահամարը: Ուղևորության ընդհանուր արժեքի 50% վճարում եք մինչև ապրլի 15-ը, մնացած 50% մինչև ապրիլի 30-ը:

Հ.Գ. Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում է լրացուցիչ այցելություններ Ֆրանսիայի Նախագահի նստավայր և հանրահայտ Բադեն-Բադեն (Գերմանիա) առողջարանային քաղաք ։
Առկա է տարբեր Եվրոպական երկրների մասնակցությամբ այս իրադարձության անցկացման լավագույն փորձը:

Կից հավելվածում՝ ծանոթացեք ծրագրին, օրակարգին և մասնակցության պայմաններին:

Հավելված

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })